

**ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ ԲԵՐՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը՝ ամբողջովին և ըստ ճյուղերի, որոշվում է որպես արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալների մասին տվյալների գումար, հաշվարկված արժեքային արտահայտությամբ՝ արտադրողի բացթողման գներով (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի): Արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանք է համարվում ձեռնարկության կողմից հաշվետու ժամանակաշրջանում թողարկված պատրաստի արտադրանքի և դրսում իրացված բոլոր կիսաֆաբրիկատների արժեքը, ինչպես նաև դրսի կամ ձեռնարկության ոչ արդյունաբերական տնտեսությունների և կազմակերպությունների պատվերով կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների արժեքը:

Արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի մեջ չի մտնում տվյալ ձեռնարկության ներսում արդյունաբերա-արտադրական կարիքների համար ծախսված սեփական արտադրության արտադրանքի արժեքը:

Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը հաշվարկվում է համադրելի գներով, ընդ որում արտադրանքի գնահատումը այդ գներով կատարվում է անմիջականորեն ձեռնարկություններում: Ֆիզիկական ծավալի ինդեքսը երկար ժամանակահատվածների համար հաշվարկվում է շրթայական մեթոդով, այսինքն առանձին ժամանակաշրջանների ինդեքսների բազմապատկման ճանապարհով :

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ընահրային արտահայտությամբ, որպես կանոն ցույց է տրված ըստ արտադրանքի համախառն թողարկման, այսինքն՝ ներառյալ տվյալ ձեռնարկության ներսում արդյունաբերա-արտադրական կարիքների համար սպառված արտադրանքը:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալի մեջ մտնում են պարենային և ոչ պարենային ապրանքները, ակոհոլային խմիչքները (ներառյալ գարեջուր): Սպառողական ապրանքներին են դասվում արտադրանքի այն տեսակները, որոնք լիովին նախատեսված են ոչ արտադրական սպառման համար: Այդ ցուցանիշը հաշվարկվում է համադրելի բացթողման գներով՝ ներառյալ ավելացված արժեքի և ակցիզային հարկերը:

Տնտեսության էլեկտրահաշվեկշռում արտացոլված է էլեկտրաէներգիայի արտադրությունը և սպառումը ըստ տնտեսության ճյուղերի:

Աշխատանքի էլեկտրագինվածությունը հաշվարկվում է որպես էլեկտրաէներգիայի սպառման և բանվորների թվաքանակի հարաբերություն:

Հանրապետության ազգային հարստության կարևորագույն մասն են կազմում հիմնական ֆոնդերը:

Հիմնական ֆոնդերին են դասվում շենքերը, կառուցվածքները, հաղորդիչ սարքերը, մեքենաները և սարքավորումները (աշխատող և ուժային մեքենաները և սարքավորումները, չափիչ և կարգավորիչ սարքերը և հարմարանքները, լաբորատոր սարքավորումները, հաշվողական տեխնիկան), փոխադրական (տրանսպորտային) միջոցները, գործիքները, բանող և մթերատու անասունները և հիմնական ֆոնդերի այլ տեսակները:

Հիմնական ֆոնդերն ըստ իրենց նշանակության բաժանվում են արտադրական և ոչ արտադրական հիմնական ֆոնդերի: Արտադրական հիմնական ֆոնդերին են դասվում նյութական արտադրության ոլորտում գործող աշխատանքի միջոցները, որոնք բազմաթիվ անգամ մասնակցում են նյութական բարիքների արտադրությանը և, դրա հետ մեկտեղ, պահպանում են իրենց բնական ձևը, մաշվում են աստիճանաբար և իրենց արժեքը մաս-մաս ամորտիզացիոն հատկացումների ձևով փոխանցում են նոր ստեղծված արդյունքին: Հիմնական ֆոնդերը, որոնք անմիջապես չեն մասնակցում արտադրական գործընթացին, կոչվում են ոչ արտադրական հիմնական ֆոնդեր:

Հիմնական ֆոնդերի դինամիկան և կառուցվածքը հաշվարկվում է համադրելի գներով տարեվերջի դրությամբ:

Արտադրական հիմնական ֆոնդերի նորացման գործակիցը հաշվարկված է որպես գործարկված արտադրական հիմնական ֆոնդերի արժեքի և դրանց տարեվերջի առկա արժեքի (առանց անասունների արժեքի) հարաբերություն:

Արտադրական հիմնական ֆոնդերի դուրսգրման գործակիցը որոշվում է որպես լուծարված հիմնական արտադրական ֆոնդերի արժեքի և դրանց տարեսկզբի առկա արժեքի (առանց անասունների արժեքի) հարաբերություն:

Ֆոնդահատույցը ըստ արդյունաբերության ճյուղերի հաշվարկված է որպես արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալի և արտադրական հիմնական ֆոնդերի միջին տարեկան արժեքի հարաբերություն:

Ֆոնդագինվածությունը հաշվարկվում է որպես արդյունաբերա-արտադրական հիմնական ֆոնդերի միջին տարեկան արժեքի և արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակի հարաբերություն:

Արդյունաբերա-արտադրական հիմնական ֆոնդերի մաշվածքը որոշված է որպես վերականգնմանն ուղղված ամորտիզացիոն հատկացումների և հիմնական ֆոնդերի նախասկզբնական արժեքի հարաբերություն:

Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին տարեկան թվաքանակը ընդգրկում է ցուցակային կազմի բանվորներին և ծառայողներին:

Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ելնելով աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և նյութական օգնության ու սոցիալական արտոնությունների գումարներից:

Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը որոշվում են ըստ մեկ աշխատողին ընկնող արտադրանքի՝ արտահայտված համադրելի գներով: Երկար ժամանակի համար աճի տեմպերի դինամիկայի հաշվարկման համար օգտագործվում է շղթայական ինդեքսների մեթոդը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրական ժողովածու

Թողարկման պատասխանատուներ՝ Ա. Անանյան

Է. Ավետիսյան

Հեռ.. (88-52) 52-35-43, 52-39-19